ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

«ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

375015. *Երևան, Արգիշտիի 1* /gshpsh@yerevan.am/ ☎011 51.41.91

№ 16/9-33 10.02.2022թ.

«Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ
տնօրեն՝ Լ. Կիրակոսյանին
ք. Երևան, Դեղատան 10, բն. 6

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի (լրիվ) լուծելու մասին

«Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ և «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ի միջև 17.11.2021թվականին կնքված «ԳՇՊՇ-ԳՀԱՊՁԲ-22/1-4» ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 1.1. կետի համաձայն, Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներով և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի №1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

08.02.2022թ. գրությամբ Վաճառող «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն «ԳՇՊՇ» ՓԲԸ-ին տեղեկացրել է, որ առաջացած խնդիրների պատճառով չի կարող կատարել 17.11.2021 թվականին կնքված «ԳՇՊՇ-ԳՀԱՊՁԲ-22/1-4» ծածկագրով գնման պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է

պայմանագիրը: Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետերը խախտվել են 5 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մ.Ա.Կ. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

«ԳՇՊՇ» ՓԲԸ **Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Տնօրենի ժ/պ

Կատ. Կ. Ամիրբեկյան
Հեռ. 011-51-41-71